



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ԵՎ ՇԻՐՈՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգալը թիվ 5065/06)

ՎՃԻՌ

(Արդարացի փոխհատուցում)

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

2011թ. նոյեմբերի 15

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*





**Հովհաննիսյանը և Շիրոյանն ընդդեմ Հայաստանի գործով,**  
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ  
Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*

Alvina Gyulumyan,

Egbert Myjer,

Ineta Ziemele,

Luis López Guerra,

Mihai Poalelungi,

Kristina Pardalos, *դատավորներ,*

և Santiago Quesada, *Բաժանմունքի քարտուղար,*

2011թ. հոկտեմբերի 18-ին դռնփակ նիստում,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

## ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Վարույթը հարուցվել է 2006թ. հունվարի 17-ին Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ պրն. Հովհաննես Հովհաննիսյանի, տկն. Աստղիկ Հովհաննիսյանի և տկն. Դիանա Շիրոյանի («դիմումատուներ») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության բերված թիվ 5065/06 գանգատի հիման վրա:

2. 2010թ. հուլիսի 20-ին կայացրած վճռում («հիմնական վճիռ») Դատարանը գտել է, որ դիմումատուներին գույքից զրկելը չի համապատասխանել օրինականության սկզբունքին, հետևաբար տեղի է ունեցել Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտում (տե՛ս, *Hovhannisyán and Shiroyan v. Armenia*, գանգատ թիվ 5065/06, պարբ. 40-47, 2010թ. հուլիսի 20):

3. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի ներքո դիմումատուները, ովքեր ունեին բնակարանի նկատմամբ օգտագործման իրավունք, որպես նյութական վնասի փոխհատուցում, պահանջեցին յուրաքանչյուրի համար 7,560,000 ՀՀ դրամ, ինչը համարժեք է 16,666.30 եվրոյի՝ ըստ կիրառվող տարադրամի փոխարժեքի: Նրանք նաև պահանջեցին 30,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի

փոխհատուցում, իսկ դիմումատու Հովհաննես Հովհաննիսյանը պահանջեց նաև դատական ծախսերի փոխհատուցում:

4. Քանի որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառման հարցը պատրաստ չէր որոշում կայացնելու համար, Դատարանը հետաձգեց այն և հրավիրեց Կառավարությանն ու դիմումատուներին այդ հարցի վերաբերյալ ներկայացնել իրենց գրավոր առարկությունները՝ Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վճռի վերջնական դառնալու օրվանը հաջորդող երեք ամիսների ընթացքում, ինչպես նաև ծանուցել Դատարանին իրենց միջև հնարավոր համաձայնության մասին (տե՛ս, նույն տեղում պարբ. 57 և եզրափակիչ դրույթների 4-րդ մասի (ա) և (բ) կետերը):

5. Դիմումատուները և Կառավարությունը ներկայացրեցին իրենց առարկությունները:

## ԻՐԱՎՈՒՆՔԸ

### 6. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, սուսած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

## Ա. Վնաս

### 1. Նյութական վնաս

#### (ա) Կողմերի դիրքորոշումները

7. Դիմումատուները հաստատեցին իրենց պահանջը: Նրանք այնդեցին, որ հնարավորություն չեն ունեցել ստանալ որևէ տեղեկատվություն պետական մարմիններից նյութական վնասի վերաբերյալ իրենց պահանջներն արդյունավետ ներկայացնելու համար, քանի որ պետական պաշտոնյաներն ունեին տնտեսական

շահագրգռվածություն կառուցապատման ծրագրերում և, հետևաբար, արգելափակում էին ցանկացած հնարավորություն ստանալու համապատասխան պաշտոնական տեղեկատվություն, մասնավորապես՝ Երևանի քաղաքի կենտրոնում անշարժ գույքի գների վերաբերյալ:

8. Վերոշարադրյալի ներքո՝ դիմումատուների ներկայացմամբ իրենց օգտագործման իրավունքի արժեքը պետք է հաշվարկվեր եկամտի կապիտալիզացիայի մեթոդի և Քաղաքացիական օրենսգրքի փոփոխված 225-րդ հոդվածով նախատեսված բանաձևի կիրառմամբ, որը սույն գործի հանգամանքներից հետո սահմանեց օգտագործման իրավունքի դադարեցման դիմաց նախատեսված փոխհատուցման գումարի հաշվարկման նոր մեթոդ (տե՛ս, *Minasyan and Semerjyan v. Armenia*, գանգատ թիվ 27651/05, պարբ. 40, 2009թ. հունիսի 23): Հիմնվելով այդ հաշվարկի վրա՝ յուրաքանչյուր դիմումատուի համար որպես նյութական վնասի հատուցում ներկայացվեց 7,560,000 ՀՀ դրամի պահանջ, որը համարժեք էր 16,666.30 եվրոյին:

9. Կառավարությունը նշեց, որ նյութական վնասի հաշվարկման համար դիմումատուների կողմից առաջարկված բանաձևը կիրառելի չէր նրանց գործին, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի փոփոխությունները, որոնցով առաջարկվել էր քննարկվող բանաձևը, ուժի մեջ են մտել միայն 2005թ. նոյեմբերի 26-ին, այսինքն՝ սույն գործի հանգամանքներից հետո: Հնարավոր նյութական վնասի գումարը պետք է հաշվարկվի հիմք ընդունելով քնակարանի առանձնահատկությունները և դրա նկատմամբ դիմումատուների իրավունքների տեսակը:

**(բ) Դատարանի գնահատականը**

10. Դատարանը մի շարք գործերում նշել է, որ խախտման փաստն արձանագրող վճռով Պետության վրա դրվում է պարտավորություն դադարեցնել խախտումը և, հետևանքները վերացնելու միջոցով հնարավորության սահմաններում վերականգնել մինչև խախտումը եղած իրավիճակը (տե՛ս, *Iatridis v. Greece* (արդարացի փոխհատուցում) [ՄՊ], գանգատ թիվ 31107/96, պարբ. 32, ՄԻԵԴ 2000-XI): Գործի կողմեր հանդիսացող Պայմանավորվող պետություններն ըստ էության ազատ են Դատարանի կողմից խախտումն արձանագրած վճռի կատարման

միջոցի ընտրության հարցում: Վճռի կատարման միջոցի ընտրության ազատությունն արտացոլում է Պայմանավորվող պետությունների՝ Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների ապահովման հիմնական պարտականությանն կցված ընտրության ազատության սկզբունքը (հոդված 1): Այն դեպքում, երբ խախտման բնույթը *restitutio in integrum* հնարավորություն է տալիս, Պետությունը կրում է պարտականություն ապահովելու դրա իրականացումը, քանի որ Դատարանը չունի իրավասություն և գործնական հնարավորություն այն իրականացնելու համար: Այնուամենայնիվ, եթե ներպետական օրենսդրությունը չի նախատեսում կամ նախատեսում է միայն խախտման հետևանքների մասնակի վերականգնման հնարավորություն, 41-րդ հոդվածը Դատարանին իրավունք է վերապահում անհրաժեշտության դեպքում տուժած կողմին տրամադրել համապատասխան արդարացի փոխհատուցում (տե՛ս, *Brumărescu v. Romania* (արդարացի փոխհատուցում) [ՄՊ], գանգատ թիվ 28342/95, պարբ. 20, ՄԻԵԴ 2001-1):

11. Սույն գործում առաջին դիմումատուի կապակցությամբ Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտումը ճանաչվել է այն հիմքով, որ բնակարանի նկատմամբ դիմումատուների օգտագործման իրավունքը դադարեցվել է այնպիսի իրավական դրույթներով, որոնք կիրառելի չեն եղել սույն գործին: Նման դադարեցումը եղել է կամայական և անօրինական (տե՛ս, *Hovhannisyan and Shiroyan*, վկայակոչված վերը, պարբ. 45): Դատարանը նշում է, որ հնարավոր չէ իրականացնել *restitution in integrum*՝ բնակարանի ոչնչացման պատճառով: Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դիմումատուին պետք է տրամադրել նյութական վնասի փոխհատուցում:

12. Դատարանը համաձայն է Կառավարության այն դիրքորոշմանը, որ նյութական վնասի հաշվարկը չպետք է իրականացվի Քաղաքացիական օրենսգրքի փոփոխված 225-րդ հոդվածի հիման վրա, քանի որ այդ դրույթն ուժի մեջ չի եղել խնդրո առարկա ժամանակահատվածում: Քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդվածի նախկին խմբագրությամբ՝ օգտագործման իրավունքի արժեքը համարժեք է բնակելի տարածության նկատմամբ նման իրավունք ունեցող անձի համապատասխան մասի շուկայական գնին (տե՛ս, նաև *Minasyan*

*and Semerjyan v. Armenia* (արդարացի փոխհատուցում), գանգատ թիվ 27651/05, պարբ. 20, 2011թ. հունիսի 7):

13. Սույն գործում 66.8քմ. ընդհանուր մակերեսով օտարված բնակելի տարածության 33.8քմ. նկատմամբ դիմումատուները համատեղ ունեցել են օգտագործման իրավունք: Այնուամենայնիվ, այդ բնակելի տարածության համապատասխան մասի դիմաց դիմումատուներին չի տրամադրվել փոխհատուցում առաջարկվել է միայն Կառավարության որոշմամբ նախատեսված հատուկ ֆինանսական խրախուսում (տե՛ս, *Hovhannisyán and Shiroyán*, վկայակոչված վերը, պարբ. 9, 14 և 26-28): Միևնույն ժամանակ, քանի որ օտարման ենթակա բնակելի տարածությունն ոչնչացվել էր և այլևս գոյություն չունեք, հնարավոր չէր ճշգրտորեն հաշվարկել դիմումատուների համապատասխան մասերի արժեքը: Հետևաբար, նյութական վնասի գնահատումը կիրականացվի արդարացիության սկզբունքի հիման վրա: Հաշվի առնելով իր նախադեպերում հաստատված համապատասխան սկզբունքները՝ Դատարանը համարում է, որ գործի հատուկ հանգամանքներով պայմանավորված, առավել համապատասխան և արդարացի լուծում է հանդիսանում խնդրո առարկա ժամանակահատվածում դիմումատուների բնակարանի մասի հավանական արժեքի վճարումը՝ փոխարկված ներկայիս համարժեք գնով, գնաճի հետևանքները հատուցելու համար:

14. Դատարանը նաև նշում է, որ 2005թ. հունիսի 16-ին Պետության և Կ.Հ.-ի (դիմումատուների ընտանիքի անդամ, տվյալ բնակելի տարածության սեփականատեր) միջև կնքված պայմանագրից ակհայտ է դառնում, որ Կ.Հ.-ն համաձայնել է հանձնել բնակարանը Պետությանը այլ բնակարանի դիմաց, նաև՝ այդ բնակարանը խնդրո առարկա ժամանակահատվածում գնահատվել է 10,285,923 ՀՀ դրամ: Հաշվի առնելով սույն տեղեկությունը և իր տրամադրության տակ եղած ողջ նյութի վրա հիմնված նման նախահաշվարկ կատարելով՝ Դատարանը նշանակում է 12,500 եվրո նյութական վնասի փոխհատուցման չափ: Դատարանը գտնում է նաև, որ փոխհատուցման գումարի այս չափը պետք է տրվի դիմումատուներին համատեղ:

## 2. Ոչ նյութական վնաս

15. Դիմումատուներից յուրաքանչյուրը պահանջեց 10,000 եվրո որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում պնդելով, որ

ապօրինի օտարման և անօթևան դառնալու արդյունքում իրենք ունեցել են անօգնականության և հիասթափության զգացում:

16. Կառավարությունը նշեց, որ դիմումատուները չեն ապացուցել, որ նրանք կրել են նյութական վնաս, ինչպես նաև, որ արձանագրված խախտման և ոչ նյութական վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ:

17. Դատարանը գտնում է, որ իրենց գույքի ապօրինի օտարման արդյունքում ունեցած անօգնականության և հիասթափության զգացումները պատճառել են դիմումատուներին ոչ նյութական վնաս, որը պետք է համապատասխան կերպով փոխհատուցվի: Կոնվենցիայի 41-րդ հոդվածի պահանջներին համապատասխան առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանը որոշում է դիմումատուներից յուրաքանչյուրին տրամադրել 2,000 եվրո կամ ընդհանուր՝ 6,000 եվրո:

#### **Բ. Դատական ծախսեր**

18. Դիմումատու Հովհաննես Հովհաննիսյանը պահանջեց 100 եվրո որպես փոստային ծախսերի փոխհատուցում:

19. Կառավարությունը նշեց, որ դիմումատուների կողմից ներկայացված DHL-ի փոստային ստացականն ամբողջությամբ չի արտացոլում նշված գումարը: Ավելին, չկար անհրաժեշտություն օգտվելու նման թանկարժեք փոստային ծառայությունից:

20. Դատարանը նշում է, որ դիմումատու Հովհաննես Հովհաննիսյանի ներկայացրած փոստային ստացականում նշված է 23,525 ՀՀ դրամ, որը մոտավորապես կազմում է 45 եվրո: Հետևաբար, Դատարանը որոշում է տրամադրել դիմումատու Հովհաննես Հովհաննիսյանին այդ գումարը:

#### **Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը**

28. Դատարանը նպատակահարմար է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոս:



## ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

### 1. Վճռում է, որ

(ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում դիմումատուներին միասին պետք է վճարի 12,500 եվրո (տասներկու հազար հինգ հարյուր եվրո) և 6,000 եվրո (վեց հազար եվրո)՝ գումարած նյութական և ոչ նյութական վնասի փոխհատուցման գումարների վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը, ինչպես նաև նույն ժամանակահատվածում դիմումատու Հովհաննես Հովհաննիսյանին պետք է վճարի 45 եվրո (քառասունհինգ եվրո)՝ գումարած ծախսերի և ծախքերի փոխհատուցման գումարների վրա հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը՝ փոխարկված ՀՀ դրամի վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

(բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պարտավորությունների չկատարման ժամանակահատվածի համար պետք է վճարվի նշված գումարի պարզ տոկոս եվրոպական կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխառության տրամադրման առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսը:

### 2. Մերժում է դիմումատուների արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերեն, գրավոր ծանուցվել է 2011թ. նոյեմբերի 15-ին՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ մասերի:

Santiago Quesada  
Քարտուղար

Josep Casadevall  
Նախագահ